«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ազգային արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասերին

Առարկա ՝ *Հայոց պատմություն*

Ուսուցիչ ՝ Ավագյան Լիլիա

Դպրոց՝ Հրանտ Մաթևոսյանի անվան հիմնական դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

Ներածություն…….. 3

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասերին…6

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……19

Ներածություն

... Վաղն ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր.- այսօր, երբ դու նվազ խոստումնալից ես, երբ քո մեջ շնորհիվ նյութապաշտական և համատարած յուսալքութեան, թուլացել է պաշտամունքը երկու աստվածությունների՝ հայրենի ժողովրդի և երկիրի, քո շարքերում, գիտես այդ, օրէցօր աճում է յոգնածների, որդեկորույսների և դարպլընթաց եղածների թիվը[1]: Գարեգին Նժդեհ

Գիտատեխնիկական վիթխարի թռիչքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն ներդրման շնորհիվ կրթության դերն աճում է ամբողջ աշխարհում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում: Վերածվելով հասարակության առաջընթացի վճռական գործոնի և ժամանակի ու հասարակության պահանջները բավարարելու, համաշխարհային գործընթացներին և զարգացումներին համաքայլ ընթանալու համար կրթության ոլորտում կատարվում են արմատական և համակարգային բարեփոխումներ: Այս գործընթացներում կարևորվում է հատկապես աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը, որը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես բովանդակային բաղադրիչ:

Աշակերտների ազգային արժեքային համակարգի ձևավորման և պահպանման մեջ կարևորվում է Հայոց պատմության դերը: Այն հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցությունն ու մտածողությունը և նրա միջոցով ավելի շատ հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին:

<<Հայոց պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնել մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն[2]>>

---

1. Գարեգին Նժդեհ, <<Հավատամք>>, Երևան 2011, էջ 2
2. Ղուկասյան Ա.; Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013 ,էջ

Դարեր շարունակ հայ պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ: Արդի ժամանակներում, երբ նյութականացվել է ամբողջ աշխարհն ու մարդկային հարաբերությունները համաշխարհայնացման գործընթացներում վտանգվում է նաև ազգային արժեքների գոյությունը, խիստ կարևորվում է ազգային արժեհամակարգի, ազգային մտածողության ձևավորման, պահպանման և ամրապնդման անհրաժեշտությունը:

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընկալվում է լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորվում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացումը: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Սովորողի, աշակերտի դաստիարակության գործն ընթանում է տարբեր համայնքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակից-ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ:

Հայրենասիրությունը այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Յուրաքանչյուր ուսուցիչ, ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սովորողների մեջ սերմանելու համար։

«Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ։ Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը»։

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է։ Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որ մեր անխառն ինքնատիպություն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ։ 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը։ Այդ ստեղծագործությունները արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները։ Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտահայտված են մեր ազգի ազգային, հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին գոյությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու ու հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը։ Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից սերնդին (Էթնոկրին)։

Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ և կկարողանա աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժեքները։Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից,

քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին

Հայոց պատմության դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Այն նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Դասընթացը նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացման ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից:

<<Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշգրիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները >>[1]:

Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար, նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային և ժառանգության բանալիները:

Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի ազգային արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային իդեալներին ու ձգտումներին պատմական հերոսների օրինակով

1.И. К. Кучерман, культурное наследие, Современные проблемы ,М., 1987, с 12

նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրության, ընկերասիրության, հաստատակամության, պատվախնդրության և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Ազգային արժեհամակարգը դարերի ընթացքում եղել է հայ ժողովրդի դիմադրելու, պայքարելու, հաջողության հասնելու կարևոր գրավականներից մեկը: Պատմությամբ ապացուցված է՝ այն պահին,երբ հայ ժողովուրդը հավատարիմ է եղել իր ազգային արժեհամակարգին, հավաքական ոգին ավելի մեծ հաջողություններ է արձանագրել, դիմագրավել շատ փորձությունների: Հետևաբար, տարբեր սպառնալիքներին մարտահրավերներին դիմագրավելու համար պետք է էլ ավելի մեծ կարևորություն տալ արժեքային համակարգի ձևավորմանը, պահպանմանը և ամրապնդմանը, քանի որ ազգային արժեհամակարգի պահպանումը ուղիղ համեմատական է պետության անվտանգության հետ:

Յուրաքանչյուր ազգ խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք ամբողջացնում և ձևավորում են տվյալ ընդհանրության ազգային դիմագիծը: Այդ արժեքները սկզբնավորում են ազգին բնորոշ և յուրահատուկ աշխարհազգացողության, աշխարհընկալման և աշխարհըմբռնման միջոցով: Այդ ընթացքում արժեքների այն խումբը, որը կազմում է ազգի արժեհամակարգի առանցքը դառնում է հիմնարար արժեք: Հիմնարար արժեքներն էլ որոշում են այդ էթնիկ ընդհանրության ամբողջական նկարագիրը:

Հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են ազգի ծագումնաբանությունը ազգը՝ որպես ընդհանուր կենսատարածք, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ բարոյականության, ազատության ու արդարության վերաբերյալ նրա պատկերացումները:

Հետևաբար, հայոց պատմության դասերին կարևորվում է հազարամյակների ընթացքում ձևավորված արժեհամակարգի արժեքների ներմուծումը սովորողների աշխարհընկալման մեջ:

Հայկական էթնիկ ընդհանրության նույնականությունը պահպանելու համար հայկական մշակույթը, հենվելով նոր արժեհամակարգի վրա, ձևավորվեց որպես քրիստոնեական ազգային մշակույթը, որում վիթխարի է Հայոց եկեղեցու դերը:

Մշակվեցին հասարարակական կյանքի կազմակերպման նոր ձևեր ու սկզբունքներ, կարճ ժամանակի ընթացքում քրիստոնեությունը դարձավ անշրջելի հավատ ու միասնական կրոն, ստեղծվեց գիր և գրականություն։ Այս արժեքների հիման վրա ձևավորվեց ազգային-հոգևոր այնպիսի նկարագիր, որ հայ ժողովուրդը հաղթականորեն դուրս եկավ հետագա դարերի արտաքին քաղաքական ու օտար մշակութային առճակատումներից։

Լեզուն, հավատը, հայրենիքը, ազգը և որոշ սովորույթներ մտնում են հաստատուն համակարգի մեջ, քանզի արժեհամակարգը միշտ հենվում է նրանց վրա, իսկ հասարակական-մշակութային կյանքի կազմակերպման ձևերը, աշխարհագրական միջավայրով և ժամանակի պահանջով պայմանավորված գործոնները՝ վերակառուցվող համակարգի մեջ։ Ազգային արժեհամակարգի ձևավորման նպատակը հայ ժողովրդի գոյապահպանումն է ու բնականոն զարգացումը։Եվ աճող սերունդը պետք է գիտակցի այն կարևոր դերակատարումը, որը վիճակված է իրեն որպես ազգային արժեհամակարգի կրող։

Այսպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ։ Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհը ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժեքները։[1] Ինչպե՞ս է ձևավորվում ազգային արժեքային համակարգը հայոց պատմության դասերին։ Չէ որ Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու և պահպանելու հայի կերպարը[1]։

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքական ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին։ Եվ կրթության զենքը, գլխավոր նպատակը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

[1]Ա. Ղուկասյան, Հայոց պատմությունը 8-9։ Ուսուցչի ձեռնարկ, էջ 5։

Այսօրվա դպրոցում պետք է գերակայի ազգային գաղափարախոսությունը: Դասագիրքը պետք է ոչ միայն արձանագրի հայոց պատմության փաստերը, այլև շունչ ու հոգի հաղորդի դրանց:

Պետք է ազգային ոգի ներարկել, համարժեք կրթության և դաստիարակության միջոցով: Չժխտելով տիրող իրականությունը՝ ասենք, որ այսօր հրամայական պահանջ է երիտասարդության դաստիարակությունն ու վերադաստիարակությունը անպարտելիության ոգով: Չէ՞ որ <<Ոգին է գծում մարդու կարողության սահմանները>>:[1]

<<Ով հայրենապաշտ և գաղափարապաշտ երիտասարդություն ունի՝ նա էլ ապագա ունի>>, - Սա է Գարեգին Նժդեհի համոզմունքը, որը առավել քան արդիական է:[2]

Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության ընթացքում շարունակ պայքարել է հանուն գոյի և ամեն գնով պահպանել այն արժեքները, որոնք եղել են հարատևման գրավականները: Հող, լեզու, պատմություն, հավատ, ահա այս քառարժեք համակարգը դարձավ բոլոր ժամանակների պայքարի հիմնաքարը:

<<Հայրենապաշտական դաստիարակություն՝ ահա մեր փրկության խարիսխը>>[3]: Ազգային արժեհամակարգի ձևավորումը այսօր դարձել է արդիական խնդիրներից մեկը: Համաշխարհայնացման դարաշրջանում արժեքների վերաձևակերպումները հեռացնում են դարեր շարունակ ամրագրված ազգային արժեքներից:

Ուստի անհրաժեշտ է ևս մեկ անգամ թերթել պատմության էջերը: <<Թեպետ և մենք փոքր ածու ենք և թվով խիստ փոքր, զորությամբ տկար և նվաճված այլ թագավորություններով, սակայն բազում արիության գործեր կան կատարված մեր աշխարհում արժանի գրելու և հիշատակման>>[4]:

Իրավամբ Հայոց ազգային գաղափարախոսությունը որպես ամբողջական համակարգ, առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Մովսես Խորենացու <<Հայոց Պատմություն>>-ում: Նիկողայոս Ադոնցը Մովսես Խորնացուն գնահատել է որպես <<Հայ ազգային առաջին գաղափարախոս>>:

1.Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 258:

2.Գ. Նժդեհ, Հավատամք, Երևան, 1991, էջ 65

3.Գ. Նժդեհ, Հավատամք, Երևան, 1991, էջ 67:

4.Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 96:

<<Հայոց պատմություն>>, առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետական գիտակցության, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հայոց պատմության առարկայի դասավանդմանը գլխավոր նպատակն է աշակերտի մոտ հայեցակարգային մոտեցումները ձևավորել ազգային արժեհամակարգի, աշխարհայացքի ձևավորման, աշխարհըմբռնման հանգուցային հարցերում:

<<[1]Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին>> հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

1. լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
2. կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
3. ունենա ազգային ինքնագիտակցություն
4. կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
5. ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,

---

[1]Ա. Ղուկասյան, Հայոց պատմությունը 8-9-րդ դդ: Ուսուցչի ձեռնարկ, էջ 6:

6. գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
7. գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը։
8. գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . .

<<[1]Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[1]։>>Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները,որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը։ Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն։ [1]Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է։Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար։ Դա կախված է մի շարք գործոններից,

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների

---

[1]Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիարակությունը,կոմպլեքսային մոտեցում։ գիտակցումից և կատարումից, Երևան 2013 , էջ 112

2. նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումից

3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից

4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից

5. սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու՝ պատմության դասերի ուղղվածությունից

6. դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,

7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,

8. սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. ստեղծագործական ,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից ,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիրակչական գործընթացի օրինաչափություններին:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները: Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու, նրա սոցիալական , հոգևոր բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ

պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները: [1]Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

<<[1]Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը:>>Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ , պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն:

[1]Ա. Սարգսյան, Ա. Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դաս., էջ 40

Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության - հանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը:

Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը,մեր համոզմամբ,խառը /համակցված/ դասն է ,որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն : Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում , ընդհանրացում , ստուգում և գնահատում:Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում , որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է , նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով , կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս : Այս դասի ընթացքում գործադրվում են բացատրական-ցուցադրական, էրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-ցուցադրական,էվրիստիկ զրույցներ, դատողական, վերլուծական և այլ եղանակներ: Եթե դասին գրեթե հավասարապես են ներկայացվում երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ, ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը: Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1. Սովորողներին զինել հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել

պատմությունից։Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին։

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները։

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին։

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը։ Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ։

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել։ Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին։

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը։ Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները։

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից։

8. Դաստիարակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում։ Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է։

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը։

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին։

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը,սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու , ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու,վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:
- Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու , վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.
- Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի,ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ
- Զարգացնել սովորողների զգայական ընկալման,մտավոր, հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն,կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում,համադրում և այլն):

Եզրակացություն

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը Հայ պատմության դասերին մեծ նշանակություն ունի հայոց պետականության գոյության, պահպանման և ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես հայոց պատմությունը առարկան:

Հայոց պատմության ծրագրի շրջանակներում սովորողները ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին ու համամարդկային նվաճումներին, ինչպես նաև այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին և կորուստներին: Հայոց պատմության ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է մշտապես պետք է լինի ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքը հայրենիքում և ամենակարևորը հայրենիք սիրելն է: Հետևաբար, կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա ազգային արժեհամակարգի ձևավորումը:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին հնարավորություն կտա՝

- Դաստիարակել հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն, հայրենիքին նվիրվելու, այն պաշտպանելու կամք ու վճռականություն:
- Հասնել այն բանին, որ ՀՀ ապագա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, հայոց պետականության գործին:

- Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ազատ ու գիտակից անհատի ու քաղաքացու ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գարեգին Նժդեհ, հավատամք, Երևան, 1991թ
2. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 1991
3. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սո վորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002
4. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981
6. Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 2013
7. Սարգսյան Ա., Մալոյան Ա., Հայոց պատմություն 10-11 -րդ դաս.